



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 01Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 20Ա ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆԸ ԳՈՐԾԵՐԻ  
ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 6-րդ մասը, դատավոր Գրիգորի Վարդանյանի դիմումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.12.2017թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-34-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի «Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գործուղելու մասին» թիվ 20Ա որոշման եզրափակիչ մասից հանել «Շենգավիթ վարչական շրջանի» բառերը:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանի անուն-ազգանունը մինչև գործուղման ժամկետի ավարտը հանել գործերի բաշխման ցանկից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 26-ից:

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ

2018թ. հունվարի 25  
ք. Երևան

Ա.ՍԿԻՏՈՒՄՅԱՆ